ՈՒՐԲԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՌՈՏ, 2019թ.

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՈՒՄ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԱՐԺԵՎՈՐՈՒՄ

2019թ.-ին «Ուրբան» Հիմնադրամը նպաստել է ավելի թափանցիկ կառավարմանը և քաղաքացիական ակտիվությանը տեղական և ներպետական մակարդակներում Հայաստանի մի շարք հանրային որլորտներում:

«Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագիր

ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորված այս եռամյա ծրագրի միջոցով «Ուրբան» հիմնադրամը մեծապես նպաստեց ծրագրի շահակիրների վարքագծային փոփոխություններին՝ անընդհատ նվազող ստորերկրյա ջրային ռեսուրսների առավել արդյունավետ և գործուն կառավարում իրականացնելու նպատակով: Ծրագիրն իրագործվեց քաղաքացիական ակտիվ մասնակցության, հանրային կրթության, ձկնաբուծարանների կողմից իրենց լավագույն փորձի ներկայացման, որոշումներ կայացնողների հետ համագործակցությամբ մի շարք օրենքների նախագծերի մշակման, ջրօգտագործողների ընկերություններին և որոշում կայացնողներին ջրային ռեսուրսների կառավարումը առավել թափանցիկ դարձնելու հարցում տրամադրված աջակցության, SS գործիքների կիրառման և խմելու ու ոռոգման ջրի ենթակառուցվածքների բարելավման միջոցով:

Ծրագրի գործընկեր համայնքները

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Բարելավված ջրային ենթակառուցվածք

- **3,200** մարդու համար 24-ժամյա ջրամատակարարում Արմավիրի մարզի Առատաշեն համայնքում
- **13,400** մարդ կապրի ավելի մաքուր Վեդիում (Արարատի մարզ)՝ կաթիլային ոռոգման համակարգի տեղադրման արդյունքում ավելացող կանաչ տարածքների շնորհիվ
- **10,000** մարդ կօգտվի ոռոգման բարելավված համակարգից 2020 թ. երկրորդ կիսամյակից սկսած

Մոբիլիզացված համայնքներ

- **5,300** մարդ 12 համայնքներում բարձրաձայնել է ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և կառավարման անհրաժեշտության մասին
- **2,600** մարդ 12 համայնքներում մասնակցել է ջրային ռեսուրսներին առնչվող խնդիրների բացահայտմանը և մշտադիտարկմանը
- **2,200** մարդ 12 համայնքներում, ներառյալ դպրոցականները և մանկապարտեզի սաները, հարստացրել է գիտելիքները ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման և օգտագործման վերաբերյալ
- **600,000** մարդ Հայաստանի Հանրապետությունում իրազեկվել են Արարատյան դաշտում ջրի խնդրի մասին
- Հայաստանի ջրի խնդիրը նաև լուսաբանվել է միջազգային լսարանի համար՝ https://medium.com; globalwaters.org.

Ջրային ռեուրսների մասնակցային կառավարման համար նպաստավոր միջավայրի ստեղծում

Ստեղծվել է ռազմավարական փաստաթուղթ, որում ներառված են ճանապարհային քարտեզ և 3 օրենքի նախագիծ հետևյալի վերաբերյալ՝

- Ջրօգտագործողների ընկերություններ
- Էկոլոգիական տեղեկատվություն
- Էկոլոգիական քաղաքականություն

Ավելի թափանցիկ և հաշվետու կառավարում

- Ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման առցանց հարթակ ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության համար
- Ջրին առնչվող խնդիրների մասին առցանց տեղեկատվության, բողոքների և առաջարկությունների ներկայացման հարթակ Վեդի համայնքում
- Արմավիր ՋՕԸ վեբկայք՝ http://armavirwua.am
- Հեռախոսային հարցման էլեկտրոնային գործիք որպես վերահսկողության և հետադարձ կապի միջոց 10 համայնքի համար տացվել է լրացուցիչ օժանդակություն **Կոկա-Կոլա հիմնադրամից (ԿԿՀ)՝** ի աջակցություն ծրագրի միջոցառումների:

ԿԿՀ-ն նպաստել է ջրային ռեսուրսների կառավարման վերաբերյալ հանրային տեղեկատվական նյութերի մշակմանը և տարածմանը, ձկնաբուծարաններ և ճահճային տարածքներ ուսումնական այցերի կազմակերպմանը, դպրոցականների համար դասընթացների կազմակերպմանը և թիրախավորված հանրային գովազդի պատրաստմանը՝ ջրօգտագործողների և ջրային ռեսուրսների կառավարման ոլորտի պատասխանատուների շրջանում իրազեկության խթանման և վարքագծային փոփոխությունների ամրապնդման նկատառումով՝

Water Users: Find your way to save water

Drip Irrigation: Find your way to save water

Fish farms: Find your way to save water

Համայնքների հենանշման առաջին գործնական կիրառումը Հայաստանում. սերտած դասեր և փորձի փոխանակում

2019թ.-ին «Ուրբան» հիմնադրամն իրականացրեց «Կարողությունների զարգացում համեմատական ուսուցման միջոցով» ծրագիրը ՝ Թբիլիսիում **Նիդերլանդների դեսպանատան** ֆինանսավորմամբ:

9 խոշորացված համայնքներ ընտրվեցին և վերապատրաստվեցին՝ չորս ոլորտներում համայնքային հենանշում իրականացնելու նպատակով՝

- Կոշտ թափոնների կառավարում
- Քաղաքացիական մասնակցություն
- Նախադպրոցական կրթություն
- Սոցիալական ծառայություններ

Ուսուցման գործընթացը հիմնված էր Նիդեռլանդների փորձի վրա՝

Հենանշման իրականացումից հետո պիլոտային համայնքները ներկայացրին իրենց արդյունքները միմյանց, իմացան գործընկեր համայնքների հետ համեմատությամբ իրենց թույլ կողմերի մասին:

Քաղաքացիական մասնակցության հենանշում



Ելնելով ստացված արդյունքներից՝ գործընկեր համայնքները մշակեցին գործողությունների ծրագրեր և ներկայումս իրականացնում են այն ծառայությունների բարելավմանն ուղղված նախագծերը, որոնցում իրենք բացեր էին հայտնաբերել:

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

2019 թվականը նշանավորվեց համայնքների մոբիլիզացման, մասնակցային կառավարման, շենքերի արդյունավետ կառավարման, շրջակա միջավայրի պահպանության և կրթության ոլորտներում շարունակական աշխատանքով:

Թափոնների կառավարումը համայնքներում

ԵՄ ֆինանսավորմամբ երկու ծրագրերով Սյունիքում և Վայոց Ձորում՝ Մաքուր դաշինք. մատչելի ծառայություններ Գորիս և Գորայք համայնքների համար և Շինարարական նյութերի ստացում պլաստիկ թափոններից, 2019թ. արձանագրվեցին կարևոր ձեռքբերումներ:

Արտադրվեց պլաստիկ թափոններից ստացված շինարարական նյութերի առաջին թվաքանակը:

Կապանը մեկնարկում է շինարարական նյութերի արտադրությունը վերամշակված պլաստիկ թափոններից և ավազից: Երկար սպասված բացման արարողությունը տեղի ունացավ 2019թ. մայիսի 11-ին՝ խորհրդանշականորեն Սյունիքի մարզի Կապան քաղաքում Եվրոպայի օրվա տոնակատարության օրը:

Ներկայումս բարելավվել են 5 համայնքային տարածքներ՝ շնորհիվ վերամշակված պլաստիկ թափոններից ստացված շինարարական նյութերի:

Պլաստիկ թափոններից արժեքային շղթա ստեղծելու գաղափարը «Ուրբան» հիմնադրամի մոտ ծագել էր տարիներ առաջ, դեռ 2009 թվականին կենցաղային աղբից պլաստիկ թափոնների տարանջատման առաջին փորձը կատարելիս: Այդ ժամանակից ի վեր տարբեր դոնորների աջակցությամբ «Ուրբան» հիմնադրամը ստեղծել է զգալի կարողություններ Հայաստանի ավելի քան 20 համայնքներում պլաստիկ թափոնների տարանջատման, սեղմման, պահպանման և փոխադրման համար:

«Մաքուր դաշինք» ծրագիրը հասնում է գագաթնակետին

Մինչ պլաստիկ թափոնները Կապանում նոր արժեք են ստանում, ԵՄ ֆինանսավորմամբ մեկ այլ ծրագիր՝ **Մաքուր դաշինքը** հասնում է իր գագաթնակետին:

Ընդհանուր առմամբ 2 ծրագրերով ապահովվել է՝

- **4** աղբահավաք մեքենա
- **381** աղբաման ընդհանուր աղբի համար
- **455** աղբաման պլաստիկ թափոնների համար
- **7** պլաստիկ թափոնի մամլիչ

Վերամշակված աղբի համար աղբահավաք մեքենաներ և աղբամաններ ձեռք բերով Կապանը, Գորիսը և Գորայքը այժմ լավ պատրաստված են թափոնների արդյունավետ կառավարում իրականացնելու առումով: **Մաքուր դաշինք** ծրագիրը ավելի մեծ թափ ստացավ, երբ 2018 թվականին ծրագրին միացավ Սիսիանի համայնքապետարանը:

Ճապոնիայի դեսպանատան աջակցությամբ «Ուրբան» հիմնադրամը **լրացուցիչ 80 ընդհանուր աղբի աղբաման** է տրամադրել Սիսիան համայնքին: Դա ԵՄ ֆինանսավորմամբ «Ուրբան» հիմնադրամի կողմից Սյունիքում իրականացվող՝ թափոնների կառավարման, տարանջատման և վերամշակման նախաձեռնություններին արժեքավոր լրացում էր:

Ծրագրով իրականացվել է կարողությունների զգալի զարգացում, ինչը հանգեցրել է երեք հարևան խոշորացված համայնքներում՝ Գորիսում, Սիսիանում և Գորայքում, թափոնների խիստ արդյունավետ կառավարման:

Շնորհիվ քաղաքացիների ուժեղ մոբիլիզացման և հանրային կրթության արշավների, համայնքներում տարանջատված և հավաքված պլաստիկ թափոնները ուղարկվում են Կապան՝ վերամշակման, կամ վաճառվում են (ինչպես Գորիսի դեպքում) շահավետ գնով՝ թափոնների կառավարման բյուջեն համալրելու նպատակով:

Կապան՝ նոր աղբահավաք մեքենան դատարկում է նոր աղբամանում հավաքված աղբը

Շենքերի թափանցիկ և արդյունավետ կառավարում

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ «Ուրբան» հիմնադրամը վերանայել և վերլուծել է այն տվյալները, որոնք պետք է ներառվեն շենքերի անձնագրերի ձևանմուշներում: Մեր փորձագետները մշակել են շենքերի ձևանմուշներ և փորձարկել են դրանք հանրային և բազմաբնակարան շենքերում: Մենք նաև մշակել ենք շենքերի ինտերգրված կառավարման առցանց հարթակի ստեղծման առաջադրանքը:

Report: Sample building passports, ToR- building management online system, best practices